ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ.594 013
էլ. փոստ suren.krmoyan@justice.am

№ 01/5953-19
«21» 03 2019 թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ**
ՀՀ, ք.Երևան, Վաղարշյան 12, ԱԿՑԵՌՆ-ի շենք, 5-րդ հարկ

Հարգելի՛ պարոն Համբարձումյան,

Կից Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ N 1110-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), Նախագծի ընդունման հիմնավորումը և տեղեկանքները:

Խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել Նախագծի վերաբերյալ Ձեր դիտողությունները և առաջարկությունները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ, **ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ**

Կատ.՝Ա. Ավոյան
ՀՀ արդարադատության նախարարություն
010 594.170

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

«____» «_____» 2019 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ N 1110-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի «Իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմնի սպասարկման գրասենյակների գործառույթները նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և այլ անձանց կողմից իրականացվելու կարգը սահմանելու մասին» N 1110-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝
   1) Որոշման վերնագրում «ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ» բառերով:
   2) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «փաստաբանական» բառից հետո լրացնել «և հաշվապահական» բառերը:
2. Որոշման հավելված N 1-ով հաստատված կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) Կարգի վերնագրում «ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ» բառերով:

2) Կարգի 2-րդ կետը լրացնել նոր 3.1 ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.1) Վերջին մեկ տարվա ընթացքում տարեկան առնվազն 20 մլն դրամի չափով հարկվող շրջանառություն ունեցող հաշվապահական գրասենյակը, որը գործունեություն է իրականացնում առնվազն վերջին 3 տարվա ընթացքում և որն ունի առնվազն 3 հաշվապահի կամ աուդիտորի որակավորում ունեցող աշխատող:»

3) Կարգը լրացնել 8.1-ին նոր կետով հետևյալ բովանդակությամբ՝

«8.1. Իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմնի սպասարկման գրասենյակների գործառույթները իրականացնելու համար հաշվապահական գրասենյակները վճարում են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նոտարների համար նախատեսված վճարի չափին համարժեք վճար:

4) Կարգի 9-րդ կետում «փաստաբանական կամ նոտարական» բառերը փոխարինել «փաստաբանական, հաշվապահական կամ նոտարական» բառերով:

5) Կարգի 22-րդ կետում «փաստաբանը կամ փաստաբանական» բառերը փոխարինել «փաստաբանը, փաստաբանական կան հաշվապահական» բառերով:

6) Կարգի 24-րդ կետում «փաստաբանի կամ փաստաբանական» բառերը փոխարինել «փաստաբանի, փաստաբանական կամ հաշվապահական» բառերով:

3. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելված N 2-ով հաստատված պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Պայմանագրի 3.3-րդ կետում «փաստաբանական կամ նոտարական» բառերը փոխարինել «փաստաբանական, հաշվապահական կամ նոտարական» բառերով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ Ն 1110-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Բիզնեսի գրանցման գործընթացի մատչելիության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1110-Ն որոշմամբ իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմնի սպասարկման գրասենյակների գործառույթները նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և այլ անձանց կողմից իրականացնելու հնարավորությունը վերապահվել է մի շարք չափանիշների համապատասխանող օպերատորների: Ներկայումս բիզնեսի հիմնադրման համար առավել մատչելի և հասանելի պայմաններ ապահովելու համար անհրաժեշտ է ներգրավել նոր օպերատորների:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Կարևորելով բիզնեսի դերը ՀՀ տնտեսության զարգացման մեջ՝ բիզնեսի հիմնադրման գործընթացը առավել մատչելի և պարզ դարձնելու համար առաջարկում ենք իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմնի սպասարկման գրասենյակների գործառույթները նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և այլ անձանց կողմից իրականացնելու հնարավորությունը վերապահել վերջին մեկ տարվա

ընթացքում տարեկան առնվազն 20 մլն դրամի չափով հարկվող շրջանառություն ունեցող հաշվապահական գրասենյակներին, որոնք գործունեություն են իրականացնում առնվազն վերջին 3 տարվա ընթացքում և որոնք ունեն առնվազն 3 հաշվապահի կամ աուդիտորի որակավորում ունեցող աշխատող:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կապահովվի բիզնեսի հիմնադրման գործընթացների պարզությունը և մատչելիությունը, մասնավորապես սպասարկման գրասենյակները կընդլայնվեն, բիզնեսի գրանցման գործընթացի այլընտրանքային ծախսերը կկրճատվեն, քաղաքացիները կխնայեն իրենց ժամանակը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ N 1110-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ N 1110-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ այլ օրենքների և իրավական ակտերի փոփոխման անհրաժեշտություն չի առաջանում: